Մրցույթ՝ «Երևանի Ա. Պուշկինի անվան հ. 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Հայոց պատմություն» (3 դասաժամ՝ ռուսերենով և 3 դասաժամ՝ հայերենով ուսուցմամբ դաս.), «Հայոց եկեղեցու պատմություն» (1.5 դասաժամ՝ ռուսերենով ուսուցմամբ դաս.), «Հասարակագիտություն» (3 դասաժամ՝ ռուսերենով և 6 դասաժամ՝ հայերենով ուսուցմամբ դաս.), «Իմ հայրենիքը» (2 դասաժամ), «Աշխարհագրություն» (6 դասաժամ՝ ռուսերենով ուսուցմամբ դաս.), «Մաթեմատիկա» (19 դասաժամ՝ ռուսերենով և 4 դասաժամ՝ հայերենով ուսուցմամբ դաս.), «Մայրենի» (7 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2023թ. օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 13-**ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. սեպտեմբերի 19-ին՝ ժամը 14:30-ին**, Երևանի Ա. Պուշկինի անվան հ.8 հիմնական դպրոցում, հասցե՝ ք.Երևան,Մոսկովյան 17: Տեղեկությունների համար զանգահարել (010) 56-49-31 հեռախոսահամարով: